

1 օգոստոսի 2019 թվականի N 956 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 105-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ մ ան է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 105-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում «օգոստոսի 1-ից» բառերը փոխարինել «նոյեմբերի 15-ից» բառերով.

2) որոշման N 1 հավելվածի N 1 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԸ

1. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

2. Գտնվելու (իրավաբանական անձանց դեպքում), բնակության (անհատ ձեռնարկատերերի դեպքում) վայրը

3. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի սերիան և համարը

4. Հեռախոսահամարը

5. Էլ. փոստի հասցե

6. Ինտերնետային կայք (առկայության դեպքում)

<p>1. Դեղերի մեծածախ իրացման գործունեության շրջանակը</p> <p>1.1 սերիայի հավաստագրում</p> <p>1.2 մատակարարում առանց սերիայի հավաստագրման</p>
<p>2. Դեղերի մեծածախ իրացման գործունեության տեսակը</p> <p>2.1 ձեռքբերում</p> <p>2.2 ներմուծում</p> <p>2.3 արտահանում</p> <p>2.4 պահպանում</p> <p>2.5 իրացում (բաշխում)</p>
<p>3. Մատակարարվող դեղային խումբ՝</p> <p>3.1 . պահպանման ընդհանուր պայմանները բավարարող դեղեր</p> <p>3.2 . արյան բաղադրիչներ և արյունից ստացված դեղեր</p> <p>3.3 .ինունաբանական դեղեր</p> <p>3.4 .ռադիոակտիվ դեղեր (ներառյալ ռադիոնուկլիդային հավաքածուներ)</p> <p>3.5.բժշկական գազեր</p> <p>3.6.սառցային շղթա պահանջող դեղեր (դեղեր, որոնց համար պահանջվում է պահպանման սառը պայմաններ՝ 2-8°C կամ 8-15°C)</p> <p>3.7.այլ արտադրանքներ (նկարագրել)</p>

Փորձագիտական եզրակացության համարը, ամսաթիվը

Այլ նշումներ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարականը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 1
Երևան